ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ա. Ասլանյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական թիվ 02Ա047435)

քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար թերթերի տպագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2019-ԱՎՎ/ԹԵՐԹ-29/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված և 18.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/07 բողոք)՝ պարզեցի հետևյալը.

1. «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը 27.03.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ոստիկանության (հետայսու՝ Պատվիրատու) կարիքների համար թերթերի տպագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2019-ԱՎՎ/ԹԵՐԹ-29/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու՝ նաև Ընթացակարգ) և ճանաչվել հաղթող: Սակայն, երբ Պատվիրատուն հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ, պատասխան ստացված եզրակացությամբ արձանագրվել է որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող 14 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հայտը մերժվել է:

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 11.06.2018թ. «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի համաձայն՝

կոմիտեի խնդիրներն են պետական հարկերի և բճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը:

Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. ավելացված արժեքի հարկը (այսուհետ նաև՝ ԱԱՀ),

բ. ակցիզային հարկը,

գ. շահութահարկը,

դ. եկամտային հարկը,

ե. բնապահպանական հարկը,

զ. ճանապարհային հարկը,

է. շրջանառության հարկը,

ը. արտոնագրային հարկը.

2) տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝

ա. անշարժ գույքի հարկը,

բ. փոխադրամիջոցների գույքահարկը:

2. Հայաստանի Հանրապետությունում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝

1) պետական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. պետական տուրքը,

բ. բնօգտագործման վճարը,

գ. սոցիալական վճարը,

դ.ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարը և օգտագործման պարտադիր վճարը,

ե. հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարը,

զ. կենսաթոշակային վճարը.

2) տեղական վճարներ, որոնց տեսակներն են՝

ա. տեղական տուրքը,

բ. տեղական վճարը:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները սահմանում են բոլոր վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից, այլ կերպ ասած վերոգրյալից հետևում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ դրոշմանիշային վճարը:

Ասվածը հիմնավորվում է նաև 19.07.2017թ. ՀՀ կառավարության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին թիվ 228-Ն հրամանով, որով սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի ձևը:

Նշված որոշման հավելվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով (այդ թվում՝ հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդի միջոցների գծով) պետական բյուջեի հանդեպ պարտավորությունները կազմում են հետևյալ հարկատեսակները.

ԱԱՀ

Շահութահարկ

Եկամտային հարկ

Ակցիզային հարկ

Շրջանառության հարկ

Արտոնագրային հարկ

Բնապահպանական հարկ

Ոչ ռեզիդենդի շահութահարկ

Սոցիալական վճար

Պետական տուրք

Բնօգտագործման վճար

Այլ հարկային եկամուտներ

Ընդամենը

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ 19.07.2017թ. ՀՀ կառավարության թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների կոմիտեի գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես ներառված չէ:

Մասնակցության հայտն ուղարկելուց առաջ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի տնօրենը՝ Աննա Ասլանյանն առաջնորդվել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորություններ բաժնի անձնական հաշվի քաղվածքով, որտեղ արտացոլված է եղել, որ Ընկերությունն ունի 52 185 ՀՀ դրամ առկա գումար միասնական հաշվում:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին դադարեցնել «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և վերջինիս ճանաչել հաղթող:

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ոստիկանությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.05.2019թ. թիվ 01.3/11/10485-19 գրությամբ ներկայացրել է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2019-

ԱՎՎ/ԹԵՐԹ-29/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից Պատվիրատուի կարիքների թերթերի տպագրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2019-ԱՎՎ/ԹԵՐԹ-29/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 27.03.2019թ. հայտ է ներկայացրել «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է ***1 012 500 ՀՀ դրամ գումար:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 04.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 14 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգը համարվել է չկայացած:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2019թ.-ի ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ ոստիկանության 03.05.2019թ. թիվ 01.3/11/10485-19 գրությունը և Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-2019-ԱՎՎ/ԹԵՐԹ-29/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով ***27.03.2019թ.*** հայտ ներկայացրած «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընկերության մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը կազմել է ***1 012 500 ՀՀ դրամ գումար***:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգը համարվել է չկայացած, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 44-րդ կետի հիման վրա 04.04.2019թ. տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ ***«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի չեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն (14 000 ՀՀ դրամ), մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպիսով՝ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նման դեպքերում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.04.2019թ. տրված թիվ 628 տեղեկանքը, առ այն, որ 27.03.2019թ. դրությամբ Ընկերությունն ունի 14000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն: Միևնույն ժամանակ նշել, որ մասնակցության հայտն ուղարկելուց առաջ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի տնօրենը՝ Աննա Ասլանյանն առաջնորդվել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորություններ բաժնի անձնական հաշվի քաղվածքով, որտեղ արտացոլված է եղել, որ Ընկերությունն ունի 52 185 ՀՀ դրամ առկա գումար միասնական հաշվում:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը:

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ համաձայն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ